

### 5.23. 2007թ. մարտ ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, մարտին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 0.5-2 աստիճանով:

Մարտի I տասնօրյակում միջին տասնօրյակային ջերմաստիճանը բարձր է եղել 2-4 աստիճանով, II տասնօրյակում՝ նորմային մոտ փոքր-ինչ բացասական շեղումով, III տասնօրյակում՝ 1-2-ով ցածր:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում կազմել է +11 +13<sup>0</sup>C, Սյունիքի նախալեռներում, ՀՀ Տավուշի և Լոռու մարզերում +5 +9<sup>0</sup>C, լեռնային շրջաններում +1 +4<sup>0</sup>C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մարտի 4-5-ին, 13-15-ին և 23-25-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +21<sup>0</sup>C, Արարատյան դաշտավայրում՝ +16 +18<sup>0</sup>C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +14 +19<sup>0</sup>C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ +10<sup>0</sup>C), ՀՀ Լոռու մարզում՝ +10 +12<sup>0</sup>C, լեռնային շրջաններում՝ +4 +8<sup>0</sup>C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -4 -9<sup>0</sup>C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ -1 -4<sup>0</sup>C, Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում՝ +1 +4<sup>0</sup>C (ք.Դիլիջանում՝ -1.6<sup>0</sup>C):

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մարտի 1-ին և 20-21-ին: Լեռնային շրջաններում գրանցվել է -11 -16<sup>0</sup>C (ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -9<sup>0</sup>C, Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -19<sup>0</sup>C, Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ -18<sup>0</sup>C), ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ -7 -10<sup>0</sup>C, Արարատյան դաշտավայրում, Սյունիքի հովիտներում և ՀՀ Տավուշի մարզում՝ -4 -5<sup>0</sup>C (ք.Դիլիջանում՝ -7<sup>0</sup>C, ք.Մեղրիում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -1<sup>0</sup>C):

Ամսական տեղումների քանակը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում զգալի գերազանցել է նորման: ՀՀ Տավուշի մարզում այն կազմել է նորմայի 200-220%-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 160-205%-ը, ՀՀ Լոռու, Կոտայքի և Սյունիքի մարզերում՝ 125-165%-ը (ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ)՝ 190%-ը, ք.Սիսիանում՝ 66%-ը), ՀՀ Արագածոտնի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ 115-126%-ը (ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ)՝ 170%-ը, ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 195%-ը), ՀՀ Շիրակի մարզում՝ 90-92%-ը:

Մարտի 5-7-ին, 9-10-ին, 15-17-ին, 19-ին, 23-25-ին և 28-29-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է տեղումներ, մնացած օրերին՝ առավելապես առանց տեղումների եղանակ:

Մարտի 31-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը լեռնային շրջաններում կազմել է 14-36 սմ (ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 4 սմ, ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 7 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 83 սմ), Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 93 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 75 սմ, Արագածի լեռնանցքում՝ 128 սմ:

Պուշկինի լեռնանցքում ամսվա մեծ մասում, Աշոցք գյուղում՝ 2-ին, 12-13-ին, 24-ին, Որոտան գյուղում՝ 5- 6-ին, 15-16-ին, 24-ին, 26-ին, ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ 8-ին, 14-ին, ք.Տաշիրում՝ 8-ին, 10-ին, 15-ին, ք.Գավառում՝ 16-ին դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ 20-500 մ (առանձին դեպքերում՝ ուժեղ մառախուղ, տեսանելիությունը՝ մինչև 50 մ, տևողությունը՝ 6 ժամ և ավելի): Պուշկինի լեռնանցքում՝ առանձին օրեր,

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ք.Ստեփանավանում (ՀՀ Լոռու մարզ)՝ 3-ին, 18-ին, Արագածի լեռնանցքում՝ 5-ին, ք.Երևանում՝ 9-ին, ք.Ապարանում՝ 16-ին, ք.Գավառում և ք.Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 24-ին, ք.Արարատում (ՀՀ Արարատի մարզ)՝ 25-ին, ք.Իջևանում՝ 26-ին դիտվել է քանու ուժգնացում, արագությունը՝ 10-19 մ/վրկ, պոռթկումները՝ 16-24 մ/վրկ (առանձին դեպքերում՝ 30-38 մ/վրկ): Աշոցք գյուղում 6-7-ին և 16-ին դիտվել է գետնահողմ (ձյունամրրիկ), արագությունը՝ 10-18 մ/վրկ, պոռթկումները՝ 12-20 մ/վրկ: Ք.Դիլիջանում 23-ին դիտվել է ուժեղ ձյուն՝ 22 մմ/12 ժամ: Մարտի 9-ին ք.Աշտարակում (ՀՀ Արագածոտնի մարզ) դիտվել է այս տարվա առաջին ամպրոպը:

Հանրապետության հյուսիս-արևելյան և կենտրոնական շրջանների գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-110%-ը, իսկ հարավային շրջանների գետերում՝ 50-80%-ը:

Սևանա լճի մակարդակը մարտ ամսվա ընթացքում բարձրացել է 6 սմ-ով և 2007թ. մարտի 31-ի դրությամբ կազմել 1898.36 մ, որը 2006թ. նույն օրվա համեմատ բարձր է 19 սմ-ով: